

**ԴԻԱԲԵՏՈՆ ՄՌ 60-Ի (ԳԼԻԿԼԱԶԻԴ)  
ՄՍՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

«\_24/03 2015  
թ.

Հայաստանի Հանրապետության կարիքները, մասնավորապես՝ բուժման նպատակներով գլիկլազիդ օգտագործող հիվանդների հրատապ կարիքները բավարարելու նպատակով, ՀՀ Առողջապահության նախարարության կողմից պատշաճ կերպով անցկացված բանակցությունների արդյունքում ՀՀ կառավարության կողմից ընդունված 2015 թվականի հունվարի 30-ի թիվ 78-Ն որոշման հիման վրա և դրան համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Արմեն Կարապետյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ ԳՆՈՐԴ), մի կողմից, և «Լե Լաբորատուադ Սեդվիե» ՍՍՍ ընկերությունը (հասցե՝ Ֆրանսիա, Սյուրեն, 92284 Կարնոտ փող. 50), ի դեմս Ա. Բելլեվերի (այսուհետ՝ ՎԱՃԱՌՈՂ), մյուս կողմից, կնքեցին Դիաբետոն ՄՌ 60 մգ-ի (գլիկլազիդ) (այսուհետ՝ Արտադրանք) մատակարարման սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿՄԱՆ**

1.1 Սույն պայմանագրով ՎԱՃԱՌՈՂԸ պարտավորվում է մատակարարել, իսկ ԳՆՈՐԴԸ պարտավորվում է ձեռք բերել սույն


**CONTRACT FOR THE SUPPLY OF  
DIABETON MR 60 (GLICLAZIDE)**

“24/03” 2015


In order to satisfy the needs of the Republic of Armenia and especially the urgent needs of the patients treated with gliclazide, following the negotiated procedure duly conducted by the Ministry of Health of the Republic of Armenia, on the basis of and in accordance with the Decision of the Government of the Republic of Armenia 78-N dated 30 January, 2015, The Ministry of Health of the Republic of Armenia represented by the head of staff Mr. Armen Karapetyan, acting based on the Charter of the Ministry of Health of the Republic of Armenia (hereinafter the “BUYER”) on the one side, and Les Laboratoires SERVIER located at 50, Rue Carnot 92284 Suresnes in France, represented by A. BEILLEVAIRE (hereinafter the “SELLER”) on the other side, sign this contract (hereinafter the “Contract”) on delivery of DIABETON MR 60 mg (gliclazide) (hereinafter the “Products”) on the following:

**1. SUBJECT OF THE CONTRACT**

1.1 The SELLER hereby takes over the responsibility to supply and the BUYER undertakes to purchase the supplied Products



1



Պայմանագրին և դրա հավելված 1-ին համապատասխան մատակարարած ապրանքը (այսուհետ՝ Արտադրանքը):

1.2 ԳՆՈՐԴԸ և ՎԱՃԱՌՈՂԸ համաձայնվում են կատարել իրենց բոլոր պարտականությունները Սույն պայմանագրին և դրա անբաժանելի մաս կազմող հավելվածներին և գործող օրենսդրության համապատասխան:

## 2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 ՎԱՃԱՌՈՂՆ Արտադրանքը մատակարարում է ԳՆՈՐԴԻՆ՝ CIP - Երևան պայմաններին համապատասխան (Incoterms2010), ք. Երևան, Արարատյան մարտատուն կամ ք. Երևան, Զվարթնոց օդանավակայան, Կարգո Տերմինալ հասցեով:

2.2 Արտադրանքը մատակարարվում է սույն պայմանագրի Հավելված 2-ով սահմանված մատակարարման ժամանակացույցին համապատասխան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ԳՆՈՐԴԻ և ՎԱՃԱՌՈՂԻ փոխադարձ համաձայնությամբ ՎԱՃԱՌՈՂԸ պայմանագիրը կատարում է ավելի կարճ ժամկետում:

2.3 ԳՆՈՐԴԸ պետք է Արտադրանքը պահեստավորի պահեստային պառշաճ պայմաններում՝ Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության համաձայն, ՎԱՃԱՌՈՂԻ մասնագիտական ցուցումներին համապատասխան: ԳՆՈՐԴԸ երաշխավորում է ՎԱՃԱՌՈՂԻՆ՝ Պայմանագրի գործողության ժամանակ իր տրամադրության տակ անհրաժեշտ անձնակազմ և միջոցներ ունենալու հանգամանքը, որոնք անհրաժեշտ են Արտադրանքը Պայմանագրով նախատեսված

(hereinafter Product) indicated in the following Contract and its Annex 1.



1.2 The BUYER and the SELLER agree to undertake all their obligations in compliance with this Contract and its indivisible part – Annexes and applicable legislation.

## 2. TERMS OF DELIVERY

2.1 The SELLER delivers the Products to the BUYER under CIP Yerevan terms (Incoterms 2010) - at the address Yerevan, Ararat custom-house or Yerevan, Zvartnots Airport, Cargo Terminal.

2.2 The Products are delivered in accordance with the supply schedule set in the Annex 2 to the Contract, except when the SELLER performs the Contract in a shorter period by mutual consent of the SELLER and the BUYER.

2.3 The BUYER shall store the Products in good condition of storage in a warehouse in accordance with the legislation in force in the Republic of Armenia and in conformity with the SELLER's professional instructions. The BUYER ensures the SELLER that during the Contract implementation period the BUYER will have relevant staff facilities necessary for effective storage and distribution of the Products on the territory of RA as stipulated by the Contract. The BUYER shall assume all expenses and risks related to the storage,



կարգով ՀՀ տարածքում արդյունավետ պահեստավորելու և բաշխելու համար: ԳՆՈՐԴՆ անձամբ է կրում ՀՀ տարածքում Արտադրանքը պահեստավորելու, տեղափոխելու և բաշխելու հետ կապված բոլոր ծախսերը և ռիսկերը:

2.4 ԳՆՈՐԴՆ համաձայնվում է բաշխել Արտադրանքը միայն ՎԱՃԱՌՈՂԻ կողմից նշված բնօրինակ ապրանքային նշանով և նման կիրառումը չպետք է ԳՆՈՐԴՆՍ տրամադրի որևէ այլ իրավունք:

ԳՆՈՐԴՆ պարտավորվում է պահպանել Արտադրանքի հետ կապված ՎԱՃԱՌՈՂԻ լոգոն, ապրանքային նշանները, ձևավորումը և արտադրական և առևտրային սեփականության իրավունքները և չփոխել փաթեթավորումը (ներառյալ պակասեցումներ և լրացումներ) բացառությամբ եթե դա սահմանված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և միայն ՎԱՃԱՌՈՂԻ գրավոր համաձայնությամբ:

2.5 ՎԱՃԱՌՈՂԻ կողմից պետք է ձեռնարկվեն բոլոր կանխարգելիչ միջոցառումները ապահովելու համար Արտադրանքի փաթեթավորման անվտանգությունը և Արտադրանքի՝ տվյալ տեսակի համար օգտագործվող տրանսպորտային միջոցների և պահեստավորման պայմաններին համապատասխանությունը:



2.6 ՎԱՃԱՌՈՂԸ երաշխավորում է, որ սույն Պայմանագրի Հավելված 1-ում նշված Արտադրանքը պատշաճ կերպով գրանցված է և թույլատրված է Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար: ՎԱՃԱՌՈՂԸ երաշխավորում է, որ Արտադրանքի որակը պետք է համապատասխանի Վերլուծության Հավաստագրին:

transportation and distribution of the Product on the territory of RA.

2.4 The BUYER agrees to distribute the Product only under the original trademarks identified by the SELLER, and such use shall not grant to the BUYER any other right. The BUYER undertakes to respect the logo, the trademarks, designs and industrial and commercial property rights of the SELLER in relation with the Products and not to change the packaging (including the release or filling ), except when such stipulated by legislation of the Republic of Armenia and only with the SELLER's written consent.

2.5 Every precaution shall be taken by the SELLER to ensure the Products are packed in a secure manner and compliance of conditions of transport and storage likely to be used for this type of Product.

2.6 The SELLER guarantees that the Product mentioned in Annex 1 of the present Contract is duly registered and authorised for use in the Republic of Armenia. The SELLER guarantees that the quality of the Product shall comply with the Certificate of Analysis.





<p>2.7 Արտադրանքը պետք է գրանցված լինի ՀՀ-ում՝ համաձայն դեղերի գրանցմանը ներկայացվող ՀՀ օրենսդրության պահանջներին և պիտակավորված ու փաթեթավորված լինի գրանցված նմուշին համապատասխան: Արտադրանքի յուրաքանչյուր փաթեթ պետք է ունենա ՀՀ-ում Արտադրանքի գրանցված նմուշին համապատասխանող ներդիր թերթիկ: Արտադրանքի յուրաքանչյուր փաթեթի վրա պետք է նշված լինի Արտադրանքի սերիան, պիտանիության ժամկետը:</p>	<p>2.7 Product must be registered in RA in accordance with the medicine registration legislative requirements of the RA and labeled and packaged in accordance with the registered/ approved specimen. Each package of the Product must have a leaflet corresponding to the respective specimen approved in accordance with the legislation of the RA. The serial number, expiration date must be indicated in each package of the Product.</p>
<p>2.8 Արտադրանքի յուրաքանչյուր տեսակ պետք է ունենա հետևյալ հստակ նշումները.</p> <ol style="list-style-type: none"> <li>1) TOP,</li> <li>2) Ընդհանուր զանգված,</li> <li>3) ՎԱՃԱՌՈՂ,</li> <li>4) ԳՆՈՐԴ,</li> <li>5) Կիրառությունը:</li> </ol>	<p>2.8 Each case of Products shall bear the following clear indications :</p> <ol style="list-style-type: none"> <li>1) TOP</li> <li>2) Gross weight</li> <li>3) SELLER</li> <li>4) BUYER</li> <li>5) Destination</li> </ol>
<p>2.9 Արտադրանքի առաքման օր է համարվում ՎԱՃԱՌՈՂԻ հաշիվ-ապրանքագրի բնօրինակում նշված ամսաթիվը (օրը, ամիսը, տարին):</p>	<p>2.9. The shipment date of the Product is considered the date (day, month, year) stipulated in the original invoice of the SELLER.</p>
<p>2.10 Արտադրանքի մատակարարման օր է համարվում այն օրը, երբ Արտադրանքը հասանելի է սույն Պայմանագրի 2.1 կետում նշված հասցեում ԳՆՈՐԴԻՆ տրամադրման համար:</p>	<p>2.10 The supply date of the Product is considered the date when the Product is available for provision to BUYER in the address mentioned in the section 2.1 of this Contract.</p>
<p>2.11 ՎԱՃԱՌՈՂԸ Արտադրանքի փաստացի առաքումից հետո 48 ժամվա ընթացքում ԳՆՈՐԴԻՆ էլեկտրոնային փոստի միջոցով պետք է տեղեկացնի Արտադրանքի առաքման վերաբերյալ՝ նշելով առաքման օրը, ամիսը, տարին:</p>	<p>2.11. The SELLER shall notify the BUYER via e-mail about shipment of the Product within 48 hours from the actual time of shipment indicating the day, month, year of supply</p>

*Ս. Հյուսիս*

*[Signature]*

<p>2.12. Պայմանագրի 2.1 կետում նշված հասցեից Արտադրանքի ստացումը ԳՆՈՐԴԻ կողմից պետք է կատարվի ԳՆՈՐԴԻ և ՎԱՃԱՌՈՂԻ, մաքսային պահեստի իրավասու անձի միջև նախապես համաձայնեցված ժամանակացույցի համաձայն:</p>	<p>2.12 Reception of the Product from the address indicated in the section 2.1 of the Contract shall be made by the BUYER within schedule agreed between the BUYER and SELLER, competent authority of customs warehouse.</p>
<p>2.13 Արտադրանքը համարվում է Վաճառողի կողմից պատշաճ մատակարարված եթե՝</p> <p>1) ստացված Արտադրանքը համապատասխանում է սույն պայմանագրի հավելված 1-ով սահմանված պահանջներին, ԳՆՈՐԴԻՆ ուղարկված Արտադրանքի փաթեթավորման ցանկին և հաշիվ-ապրանքագրին,</p> <p>2) Առկա է Արտադրանքի առաքված ամբողջ քանակությունը՝ հավելված 5-ում նկարագրված մատակարարման ժամանակացույցին համապատասխան:</p>	<p>2.13 The Product considered as duly supplied by the SELLER, if:</p> <p>1) Delivered Product corresponds with requirements defined by Annex 1 of this Contract, with packing list and invoice sent to the BUYER,</p> <p>2) The whole amount of the Product has been delivered in accordance with schedule of delivery described in Schedule 5.</p>
<p>2.14 Արտադրանքը ստանալուց հետո ԳՆՈՐԴԸ պետք է՝</p> <p>ա. հաստատի ստացված Արտադրանքի համապատասխանությունը (Արտադրանքի ինքնությունը, խմբաքանակի համարը, քանակը) Գնորդին ուղարկված Արտադրանքի փաթեթավորման ցանկին և հաշիվ-ապրանքագրին, և</p> <p>բ. ուղարկված ամբողջ բեռի առկայությունը,</p> <p>գ. արտաքին վնասվածքների բացակայությունը:</p>	<p>2.14 Upon Reception of the Products, the BUYER shall:</p> <p>a. verify the compliance of the Products delivered (identity of the products, batch number, volume) against packing list of Products to be delivered to the BUYER and invoice; and</p> <p>b. verify that the whole delivery is present, and</p> <p>c. verify the absence of visible damage.</p>
<p>Արտադրանքը ստանալուց հետո երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում, եթե այն համապատասխանում է սույն պայմանագրի հավելվածներ 1-ով և 2-ով սահմանված պահանջներին ԳՆՈՐԴԸ պետք է ֆաքսով և էքսպրես նամակով կամ էլեկտրոնային նամակով ուղարկի ստացման հաստատում՝ մանրամասն նկարագրելով ստացված խմբաքանակը և դրա քանակը:</p>	<p>Within three (3) working days upon Reception of the Product, if it is in compliance with the requirements defined under Annexes 1 and 2 of this Contract the BUYER shall send by fax and express mail or e-mail a report of receipt detailing the batches and the quantities received.</p>

<p>2.15 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները ընդունվում են ԳՆՈՐԴԻ և ՎԱՃԱՌՈՂԻ միջև սույն պայմանագրի հավելված 4-ին համապատասխան հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: ԳՆՈՐԴԻ կողմից Արտադրանքը ստանալու վերաբերյալ սույն կետով սահմանված գրավոր հավաստումն ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում ԳՆՈՐԴԸ ՎԱՃԱՌՈՂԻՆ է ներկայացնում մատակարարված Արտադրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու (2) օրինակ:</p>	<p>2.15 The Execution results of the Contract or any part thereof are accepted according to the Annex 4 of the Contract between the BUYER and SELLER by signing the Act of Acceptance (hereafter: Act). After receiving written confirmation defined under this article about Product acceptance from BUYER, the BUYER presents to SELLER two (2) examples of signed Act of Acceptance of supplied Product within 2 working days.</p>
<p>2.16 ԳՆՈՐԴԸ հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո երկու (2) աշխատանքային օրվա ընթացքում ՎԱՃԱՌՈՂԻՆ է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ (1) օրինակը:</p>	<p>2.16 Within two (2) working days after signing the Act of Acceptance the BUYER provides to SELLER one (1) example of signed Act of Acceptance.</p>
<p>2.17 Մակատարարված Արտադրանքի սույն պայմանագրի և դրա հավելված 1-ով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում իրականացվում են հետևյալ միջոցառումները.  2.17.1 Արտաքին վնասվածքների առկայության դեպքում, ապահովագրական ընկերության կողմից ԳՆՈՐԴԻՆ ապահովագրական փոխհատուցման տրամադրման համար, ԳՆՈՐԴԸ պետք է՝  ա) նախքան Արտադրանքի մատակարարման ընդունումը, ԳՆՈՐԴԸ ստացման փաստաթղթում կամ բեռնափոխադրողի կողմից տրամադրված փաթեթավորման ցանկում պետք է նշի վիճարկվող փաթեթների արտաքին տեսքը, նույնականացման համարը, քաշը և համարը):  բ) ԳՆՈՐԴԸ իր իրավասության սահմաններում</p>	<p>2.17 In case of non-compliance of supplied Product with the requirements of this Contract and its Annex 1, the following activities are implemented:  2.17.1 In the event of visible damages of the boxes, and in order for the insurance company to provide the insurance coverage to the BUYER, the BUYER shall:  a) Before accepting delivery of the Products, the BUYER shall mention on the delivery note or on the packing list provided by the Carrier the external appearance, the identification numbers, and the number and weight of the disputed packages.  b) BUYER within its competences takes, or</p>

*Մ. Հրաչյան*

*[Signature]*

կրում կամ պահանջում է անհրաժեշտ բոլոր կանխարգելիչ քայլերը, որոնք անհրաժեշտ են ապահովագրված Արտադրանքի պահպանման կամ առկա վնասի նվազեցման համար,

զ) Ֆաքսով, էքսպրես նամակով կամ էլեկտրոնային նամակով ուղարկել ՎԱՃԱՌՈՂԻ հայաստանյան ներկայացուցչին ստացման փաստաթղթի կամ փաթեթավորման ցանկի պատճենը (CMR կամ բեռի առաքումը հավաստող փաստաթուղթ կամ բեռի առաքումը հավաստող այլ փաստաթուղթ)՝ նշելով վիճարկվող փաթեթների արտաքին տեսքը, նույնականացման համարը, քաշը և համարը,

դ) Անհրաժեշտ է դիմել ՎԱՃԱՌՈՂԻ հայաստանյան ներկայացուցչին, որպեսզի վերջինս դիմի այն ապահովագրական ընկերության ծառայություններին, որի անունը նշված է ապահովագրական վկայականի վրա 2000 եվրոն գերազանցող որևէ կորստի կամ վնասի դեպքում՝ ապահովագրական ընկերության կողմից փոխհատուցման ստացման համար:

ե) ՎԱՃԱՌՈՂԻՆ ուղարկել կորուստի արձանագրման գեկույցի պատճենը,

զ) Գրանցել բոլոր իրավունքներն ու միջոցները ընդդեմ փոխադրողների և/կամ մյուս բոլոր երրորդ իրավասու կողմերի՝ ստացման պահից 24 ժամվա ընթացքում նրանց ուղարկելով գրանցված նամակ նկարագրելով առաջացած վնասները, ինչպես նաև այդ նամակի պատճենն ուղարկել ՎԱՃԱՌՈՂԻ հայաստանյան ներկայացուցչին:

է) Եթե ԳՆՈՐԴԸ ստորև նկարագրված ընթացակարգի համաձայն չի տեղեկացնում նման վնասի մասին, Ապրանքները համարվում են ընդունված և ՎԱՃԱՌՈՂԻ կամ նրա ապահովագրողի կողմից որևէ փոխհատուցում չի տրվում ԳՆՈՐԴԻՆ:

requests all the necessary protective steps necessitated by the situation for protection of the the insured Product or limitation of the damage thereto,

c) Send by fax, express mail or email to the Armenian representative of SELLER a copy of delivery note or packing list (CMR or airway bill or bill of lading) mentioning the external appearance of the boxes, the identification numbers, and the number and weight of the disputed packages.



d) Ask immediately the Armenian representative of SELLER to request the services of the insurer's loss adjuster, which name is mentioned on the insurance certificate, or representative for any loss or damage exceeding 2000 EUR, in order to obtain the compensation by the INSURER

e) Send to the Armenian representative of SELLER a copy of the loss adjuster's report,

f) Reserve all rights and remedies against the carriers and/or all other third parties liable by sending within 24 hours of the delivery a registered letter to the Carrier or the third party involved describing the damages that occurred, and a copy of this letter to the Armenian representative of SELLER

g) If the BUYER fails to notify such claim in accordance with the procedure described here above, the insurance coverage will be inoperant and the Products shall be deemed accepted, and no compensation whatsoever will be given by the SELLER or its insurer

<p>ը) 2.17.1 կետում նշված դեպքերում ՎԱՃԱՌՈՂԻ միանձնյա պատասխանատվությունը պետք է սահմանափակվի համապատասխան գումարի ներման/հաշվանցման հաշվի (credit note) տրամադրմամբ՝ 2000 եվրոն չգերազանցող որևէ կորստի կամ վնասի դեպքում, որը չի հատուցվում ապահովագրական քաղաքականության համաձայն:</p> <p>2.17.2 Արտադրանքի՝ այն մատակարարման նախապատրաստելու փուլում առաջացած որևէ սխալի կամ անտեսանելի վնասվածքների (տեղեկատվական թերթիկի բացակայություն, փաթեթավորման սխալներ, օրինակ՝ այլ լեզվով կամ սխալ պիտակավորմամբ) դեպքում, Արտադրանքի ստացումից հետո հայտնաբերման դեպքում, ԳՆՈՐԴԸ պարտավոր է ՎԱՃԱՌՈՂԻՆ էլեկտրոնային նամակով տեղեկացնել այդ մասին սխալի կամ անտեսանելի վնասվածքների հայտնաբերումից անմիջապես հետո:</p> <p>Վնասված Արտադրանքը ԳՆՈՐԴԻ կողմից գույքագրվում է և առանձնացվում՝ մինչ ՎԱՃԱՌՈՂԻ համապատասխան որոշման կայացումը:</p> <p>2.17.2 կետերում նշված դեպքերում ՎԱՃԱՌՈՂԻ միանձնյա պատասխանատվությունը պետք է սահմանափակվի համապատասխան գումարի ներման/հաշվանցման հաշվի (credit note) տրամադրմամբ: ՎԱՃԱՌՈՂԸ չպետք է տրամադրի որևէ credit note, եթե պահանջվող փոխհատուցումը ցածր է 300 (երեք հարյուր) եվրոյից:</p> <p>2.18 Այն դեպքում, երբ ստացվող խմբաքանակն ամբողջությամբ կորել է, ԳՆՈՐԴԸ պարտավոր է՝</p> <p>ա. անմիջապես այդ մասին տեղեկացնել</p>	<p>to the BUYER.</p> <p>h) In the events listed in this Article 2.17.1, the SELLER's sole responsibility shall be limited to the issuance of a credit note for any loss or damage under 2000 EUR which is the deductible of the insurance policy.</p> <p>2.17.2 In case of any mistake in the preparation of the supply or a hidden damage (absence of leaflets, error in packaging (absence of information list, wrong language or wrong labelling, for example) is discovered after reception of the Products, the BUYER shall inform the SELLER by email immediately upon the discovery of mistake or hidden damage. The damaged Product shall be recorded in inventory and separated by the BUYER until the appropriate decision from the SELLER.</p> <p>In the events listed in Article 2.17.2, the SELLER's sole responsibility shall be limited to the issuance of a credit note for the corresponding amount.</p> <p>The SELLER will not issue any credit note as long as the total amount of pending complaints is lower than 300 (three hundred) euros.</p> <p>2.18 In the event that a consignment is entirely lost, the BUYER shall:</p> <p>a. Inform immediately the SELLER and its</p>
---	--






<p>ՎԱՃԱՌՈՂԻՆ և նրա հայաստանյան ներկայացուցչին,  բ.ՎԱՃԱՌՈՂԻՆ տրամադրել բեռնափոխադրողի կողմից տրամադրված առաքման անհնարության (կամ կորստի վկայականի) մասին փաստաթղթի բնօրինակը՝ ապահովագրական ընկերության կողմից փոխհատուցման ստացման համար:</p> <p>Հոդված 6-ով նախատեսված պատասխանատվությունները չեն տարածվում 2.17 և 2.18 կետերում թվարկված դեպքերի վրա:</p> <p>2.19 ՎԱՃԱՌՈՂԸ պարտավորվում է յուրաքանչյուր տարի ԳՆՈՐԴԻՆ անվճար տրամադրել 12 ամսվա ընթացքում առաքված ամբողջ Արտադրանքի տասը (10) տոկոսի չափով Արտադրանք, ինչը Առողջապահության Նախարարությունը նախատեսում է օգտագործել բարեգործական նպատակներով:</p> <p><b>3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</b></p> <p>3.1 ԳՆՈՐԴԻՆ իրավունք ունի՝</p> <p>3.1.1 Արտադրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում ՎԱՃԱՌՈՂԻ կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Արտադրանքն ընդունելուց:</p> <p>3.1.2 Եթե մատակարարված Արտադրանքը չի համապատասխանում սույն պայմանագրի հավելված 1-ով նախատեսված տեխնիկական բնութագրին և ԳՆՈՐԴԻՆ այդ մասին տեղեկացրել է ՎԱՃԱՌՈՂԻՆ սույն պայմանագրին 2-րդ կետով սահմանված կարգով, ԳՆՈՐԴԻՆ իրավունք ունի.</p>	<p>Armenian representative.</p> <p>b. Provide the SELLER with the original of the non-delivery certificate (or loss certificate) issued by the carrier in order to obtain the compensation by the INSURER</p> <p>The liability defined in article 6 shall not apply to cases listed in Articles 2.17 and 2.18.</p> <p>2.19 The SELLER shall provide to the BUYER each year a quantity of Product free of charge corresponding to ten (10) percent of the total Product shipped during 12 months, which the Ministry of Health intends to use for charity purposes.</p> <p><b>3. RIGHTS AND OBLIGATIONS OF THE PARTIES</b></p> <p>3.1 The BUYER has the right to:</p> <p>3.1.1. Refuse to accept the Product if the SELLER does not deliver the Products within the period set by the Contract.</p> <p>3.1.2. If the quality of delivered Products does not correspond to the technical specification intended in the Annex 1 of this Contract, and the BUYER has notified the SELLER according to the instructions in the paragraph 2 of this Contract, the BUYER has the right to:</p>
--	---

*Մ. Զեյնալ*

*[Signature]*

<p>ա. չընդունել Արտադրանքը, բ. սահմանել անպատշաճ որակի Արտադրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Արտադրանքով անհատույց փոխարինելու ողջամիտ ժամկետ: Արտադրանքի որակի հետ կապված պահանջները ներկայացվում են սույն պայմանագրի 2-րդ կետով սահմանված կարգով կամ կիրառելի օրենսդրությամբ սահմանված կարգով:</p> <p>3.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե ՎԱՃԱՌՈՂՆ էականորեն խախտել է սույն պայմանագիրը:</p> <p>3.1.3.1 ՎԱՃԱՌՈՂԻ կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, մասնավորապես եթե՝ ա. Արտադրանքը, որը չի համապատասխանում հավելված 1-ով սահմանված պահանջներին, մատակարարվել է և չի կարող փոխարինվել 30 (երեսուն) օրացուցային օրերի ընթացքում, բ. արտադրանքի մատակարարման ժամկետը խախտվել է 30 (երեսուն) օրացուցային օրվանից ավելի ժամկետով:</p> <p>3.1.4. 3.1.3 կետով նախատեսված պայմանագրի լուծումը տեղի է ունենում ԳՆՈՐԴԻ կողմից բողոքի հիմքերը ներկայացնող հետադարձ ծանուցմամբ նամակը ուղարկելուց հետո երեսուն (30) օր անց, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ընթացքում կատարում է իր պարտավորությունները:</p> <p>3.1.5 ԳՆՈՐԴԸ իրավունք ունի Ձննել Արտադրանքը և հայտնաբերված թերությունների մասին տեղեկացնել ՎԱՃԱՌՈՂԻՆ սույն պայմանագրի 2-րդ կետով նախատեսված կարգով:</p>	<p>a. refuse to accept the Product</p> <p>b. to set a deadline to replace the Products of insufficient quality with the Products that correspond to the conditions set by the Contract free of charge. The quality claims of the Product are issued as defined by the Article 2 of this Contract or according to applicable legislation.</p> <p>3.1. 3. Terminate the Contract unilaterally if the SELLER has significantly breached the Contract:</p> <p>3.1.3.1. Breach of the Contract by the SELLER is considered to be significant in particular if:</p> <p>a) Products which do not comply with the terms of Appendix 1 are delivered and can not be replaced within thirty (30) calendar days.</p> <p>b) Delay in delivery of the Product exceeds 30 (thirty) calendar days,</p> <p>3.1.4 Termination indicated in Article 3.1.3 will take effect thirty (30) days after mailing by the BUYER of a return-receipt registered letter setting forth the grounds for its complaint, unless within such time the SELLER discharges its obligation.</p> <p>3.1.5 The BUYER has the right to examine the Product and inform the SELLER about the defects according to the procedure at paragraph 2 of this Contract.</p>
--	---

3.1.6 Տարեկան կտրվածքով մեկ անգամ իրականացնել նմանատիպ պայմանագրով գնվող դեղի ՀՀ շուկայի ուսումնասիրություն և դրա արդյունքում պայմանագրային գնից քսան տոկոսից ավել գների նվազում արձանագրելու դեպքում առաջարկել ՎԱՃԱՌՈՂԻՆ իջեցնել պայմանագրային գինը արձանագրված համապատասխան նվազած գնով: Կողմերի միջև այս առաջարկի վերաբերյալ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում, ՎԱՃԱՌՈՂԸ և ԳՆՈՐԴԸ իրավասու են դադարեցնել Պայմանագիրը՝ դադարեցման մասին գրավոր հետադարձ ծանուցմամբ նամակը ուղարկելուց 30 (երեսուն) օրվա ընթացքում նման դադարեցումը ՎԱՃԱՌՈՂԻ և ԳՆՈՐԴԻ համար չի առաջացնում որևէ պարտավորություններ և տույժեր:

**3.2 ԳՆՈՐԴԸ պարտավոր է՝**

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Արտադրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Սույն Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում վճարել նաև սույն Պայմանագրի 6.4 կետով նախատեսված տույժը:

3.2.3 Արտադրանքի քանակի, տեսականու, որակի մասով սույն Պայմանագրի պայմանները խախտելու մասին ՎԱՃԱՌՈՂԻՆ ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո, Պայմանագրի 2-րդ կետով նախատեսված կարգով:

3.2.4 ՎԱՃԱՌՈՂԻՆ տեղեկացնել բոլոր օրենքների և այլ իրավական ակտերի ընդունման մասին, որոնք կարող են ազդել

3.1.6 Once a year implement a RA market investigation in connection with the drug purchased in accordance with this Contract and in case of recording of more than twenty percent decrease from Contract price, offer to the SELLER to lower the price recorded in accordance with the decreased cost. In the event of absence of consent between the Parties on this offer, the SELLER and the BUYER shall be entitled to terminate the Agreement within thirty (30) days of the sending of a written return-receipt registered letter, such termination not entailing any liability and/or penalty for the SELLER and the BUYER.

**3.2. The Buyer is obliged to:**

3.2.1. Take all necessary measures to accept the Products delivered in accordance with the terms of the Contract.

3.2.2. Make the payments in terms and periods set by this Contract and in case of breach of the payment terms also to pay the fine according to Article 6.4 of the Contract.

3.2.3. Inform the SELLER on breach of terms of the Contract on the amount, assortment, and quality after discovering them, as indicated in Article 2 of the Contract.

3.2.4. Inform the SELLER about passing of laws and other legislative acts that can affect the packing, labeling, loading, licensing,

փաթեթավորման, պիտակավորման, բեռնման, լիցենզավորման, ներմուծման և Հայաստանի Հանրապետության տարածքում Արտադրանքի բաշխման վրա:

3.2.5. ՎԱՃԱՌՈՂԻՆ անհապաղ հաղորդել բոլոր անցանկալի դեպքերի մասին, որոնք տեղի են ունեցել Հայաստանի Հանրապետության տարածքում՝ ոչ ուշ, քան ԳՆՈՐԴԻ՝ անցանկալի դեպքի մասին տեղեկացվելուց հետո հինգ (5) օրացույցային օրվա ընթացքում կամ ավելի կարճ ժամանակահատվածում՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով: ԳՆՈՐԴԸ պարտավոր է ծանուցել ՎԱՃԱՌՈՂԻՆ այնքան մանրամասն, որքան անհրաժեշտ է որպեսզի ՎԱՃԱՌՈՂԸ կարողանա պահպանել Հայաստանի Հանրապետությունում-ում գոյություն ունեցող բոլոր կարգավորումները (հետևանքի, պիտակավորման կամ դեղի գրանցման հետ կապված այլ փոփոխություն): Սույն կետի իմաստով Անցանկալի Դեպք է ցանկացած բացասական նախանշան, որն արտահայտվել է ցանկացած Արտադրանք ընդունելու ժամանակ կամ ընդունելուց հետո, ինչի մասին ցանկացած Կողմը կամ դրա հետ փոխկապակցված ցանկացած անձ տեղեկանում է, և անկախ այն բանից, թե դա համարվում է ուղղակիորեն դեղի հետ կապված թե ոչ՝ ներառյալ, սակայն առանց սահմանափակման, ցանկացած կողմնակի ազդեցություն, վնասվածք, թունավորման կամ զգայունության ռեակցիա կամ նախատեսված ֆարմակոլոգիական ազդեցության էական ձախողում, հավասարապես՝ սիմպտոմատիկ չափից մեծ դոզայի կիրառում, չարաշահման կամ դեղի ընդունման դադարեցման ռեակցիա:



3.2.6. Ապահովել ԳՆՈՐԴԻՑ պահանջվող բոլոր փաստաթղթերի պատճենների առկայությունը և դրանք ՎԱՃԱՌՈՂԻՆ ներկայացնել CIP -

importation and distribution of the Products in the territory of Republic of Armenia.



3.2.5. Report the SELLER on all adverse events that took place on the territory of Republic of Armenia not later than five (5) calendar days from the date that the BUYER should have become aware of the adverse event, or within a shorter period in the cases stipulated by the legislation of RA. The BUYER shall notify the SELLER in details to allow the SELLER to comply with all regulatory requirements of Republic of Armenia (e.g.: recall, labeling and other changes related to drug registration procedure etc.). By means of present section “Adverse Event” is any negative symptom experienced at the time of or after the accepting of any Product of which any Party or any of its Affiliates becomes aware, whether or not considered drug related, including, without limitation, any side effects, injury, intoxication or sensitivity reaction or significant failure of expected pharmacological action, as well as instances of symptomatic overdose, abuse or drug intake termination reactions.

3.2.6 Ensure the availability of and provide to the SELLER upon demand copies of all



<p>Երևան (Incoterms2010) պայմաններին համապատասխան:</p> <p>3.2.7. Ապահովել իր սեփական միջոցների հաշվին ինչպես Արտադրանքի ընդունումը Երևան, Արարատյան մաքսատուն կամ Զվարթնոց օդանավակայան, Կարգո տերմինալ հասցեում և մաքսային վճարների վճարումը, այնպես էլ Արտադրանքի հետագա տեղափոխումը մաքսատնից:</p> <p><b>3.3 ՎԱՃԱՌՈՂՆ իրավունք ունի՝</b></p> <p>3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն Պայմանագրով և դրա հավելվածներով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Արտադրանքը.</p> <p>3.3.2 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Արտադրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:</p> <p>3.3.3 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Արտադրանքը:</p> <p>3.3.4 Միակողմանորեն լուծել Պայմանագիրը, եթե ԳՆՈՐԴԸ էականորեն խախտել է Պայմանագիրը:</p> <p>3.3.4.1 ԳՆՈՐԴԻ կողմից Պայմանագրի էական խախտում է համարվում, մասնավորապես.</p> <p>ա. ԳՆՈՐԴԸ ՎԱՃԱՌՈՂԻՆ չի վճարում սույն Պայմանագրով և դրա հավելվածներով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Արտադրանքի դիմաց Պայմանագրի հավելված 4-ով նախատեսված գումարը,</p>	<p>documents required from the BUYER in accordance with CIP - Yerevan customs warehouse (Incoterms 2010).</p> <p>3.2.7. Ensure at its own expense the acceptance and the custom clearance of the Product at the address Yerevan, Ararat custom-house or Yerevan, Zvartnots Airport, Cargo Terminal, , as well as their further transportation from the customs office.</p> <p><b>3.3. The Seller has the right to:</b></p> <p>3.3.1. Require the BUYER to accept the Product delivered in accordance with the terms set by the Contract and its Annexes.</p> <p>3.3.2. Require the BUYER to pay under the conditions set forth in the Agreement for the Products delivered in accordance with the terms of the Contract.</p> <p>3.3.3 Deliver the Products earlier, with the consent of the BUYER.</p> <p>3.3.4 Terminate the Contract unilaterally if the BUYER has significantly breached the Contract:</p> <p>3.3.4.1 Breach of the Contract by the BUYER is considered to be significant, in particular if:</p> <p>a) BUYER fails to pay the SELLER the amount set in Article 4 of the Contract and under the conditions defined in the Agreement for Product delivered according to the terms and conditions of this Contract and its Annexes</p>
--	--

<p>բ. ԳՆՈՐԴԸ խախտում է Պայմանագրի հավելված 3-ով սահմանված վճարման ժամկետը 30 (երեսուն) օրացուցային օրվանից ավելի ժամկետով:</p> <p>3.3.5 3.3.4 կետով նախատեսված դեպքերում Պայմանագրի լուծումը տեղի է ունենում ՎԱՃԱՌՈՂԻ կողմից բողոքի հիմքերը ներկայացնող հետադարձ ծանուցմամբ նամակը ուղարկելուց հետո երեսուն (30) օր անց, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ընթացքում ԳՆՈՐԴԸ կատարում է իր պարտավորությունները:</p> <p>3.3.6 Ապահովել իր ներկայացուցչի ներկայությունը Արտադրանքի ընդունման-հանձնման գործընթացին:</p> <p>3.3.7 ԳՆՈՐԴԻ կողմից վճարման հետաձգման դեպքում՝ հետաձգել Արտադրանքի հաջորդ մատակարարումը այնքան ժամանակով, որքան ժամանակով հետաձգվել է վճարումը: Այս դեպքում մատակարարման հետաձգումը չի համարվում ՎԱՃԱՌՈՂԻ պարտավորությունների խախտում:</p> <p><b>3.4 ՎԱՃԱՌՈՂԸ պարտավոր է՝</b></p> <p>3.4.1 ԳՆՈՐԴԻՆ հանձնել Արտադրանքը սույն պայմանագրով և դրա հավելվածներով նախատեսված կարգով և ժամկետներում: ՎԱՃԱՌՈՂԻ կողմից խախտում չեն համարվում այն դեպքերը, երբ անհնար է ԳՆՈՐԴԻՆ մատակարարել Արտադրանքը՝ առողջապահության ոլորտի լիազոր մարմնի և/կամ հիվանդների անվտանգության ապահովման նպատակով շուկայում դեղի շրջանառության կասեցման և/կամ հետկանչման արդյունքում և/կամ ՎԱՃԱՌՈՂԻ որոշման հիման վրա :</p>	<p>b) BUYER breaches stated terms of Article 3 of the Contract more than 30 (thirty) calendar days.</p> <p>3.3.5 The termination stated in the Article 3.3.4 will take effect thirty (30) days after mailing by the SELLER of a return-receipt registered letter setting forth the grounds for its complaint, unless within such time the BUYER discharges its obligation.</p> <p>3.3.6 Send its representative to be present at the Product acceptance process.</p> <p>3.3.7. In case of payment delay from the part of the BUYER suspend the next delivery of the Products for a period equal to the BUYER's delay. Such suspension of delivery will not be treated as breach of obligations from the SELLER.</p> <p><b>3.4. The Seller is obliged to:</b></p> <p>3.4.1. Deliver the Products to the BUYER in terms and conditions set by the Contract and its Annexes. The SELLER shall not be considered in breach of its obligations in case it is unable to supply the BUYER with the Products because of the suspension of drug circulation and/or its withdrawal from the market following the decision of a health body and/or for patients safety purposes and/or following the SELLER's decision.</p>
---	--

<p>3.4.2 ԳՆՈՐԴԻՆ հանձնել Արտադրանքը, որի նկատմամբ ունի սեփականության և վաճառքի իրավունք:</p> <p>3.4.3 ԳՆՈՐԴԻ պահանջով 3.4.7-րդ կետին համաձայն տրամադրել Արտադրանքի որակը հավաստող փաստաթղթեր:</p> <p>3.4.4 Մատակարարել Արտադրանքը ԳՆՈՐԴԻՆ միայն այն դեպքերում, եթե ԳՆՈՐԴԸ չունի հետաձգված պարտավորություններ ՎԱՃԱՌՈՂԻ նկատմամբ:</p> <p>3.4.5 Վճարել Արտադրանքի փոխադրման և ապահովագրության ծախսերը CIP - Երևան (Incoterms 2010) պայմաններին համապատասխան:</p> <p>3.4.6. Սույն պայմանագրի կատարման ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել ԳՆՈՐԴԻՆ:</p> <p>3.4.7. ՎԱՃԱՌՈՂԸ պետք է Արտադրանքի յուրաքանչյուր առաքման ժամանակ ապահովի հետևյալ փաստաթղթերի առկայությունը.</p> <ol style="list-style-type: none"> <li>1) ավիաբեռնագիր (1 բնօրինակ),</li> <li>2) Հաշիվ-ապրանքագիր (1 բնօրինակ)</li> <li>3) Վերլուծության հավաստագիր (1 կրկնօրինակ)</li> <li>4) Փաթեթավորման ցանկ (1 բնօրինակ)</li> <li>5) Ծագման վկայական,</li> <li>6) Ապահովագրության վկայական:</li> </ol> <p>3.4.8. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված սույժը և սուղանքը:</p>	<p>3.4.2. Deliver the BUYER Product for which it has title and right to market.</p> <p>3.4.3. Submit the quality verifying documents of the Product, in accordance with the requirement of the BUYER, in accordance with 3.4.7</p> <p>3.4.4. Shipment the Product to BUYER only in cases, if the BUYER has no over due debts to the Seller.</p> <p>3.4.5. Pay for transportation and insurance of the Product in accordance with terms of CIP Yerevan (Incoterms 2010).</p> <p>3.4.6. Provide the BUYER a written notice beforehand in case of initiating the liquidation or bankruptcy process during the Contract implementation.</p> <p>3.4.7. Ensure the availability of the following documents during each delivery of the Products :</p> <ol style="list-style-type: none"> <li>1) Airway bill – (1 original copy)</li> <li>2) Invoice ( 1 original copy)</li> <li>3) Certificate of analysis (1 copy)</li> <li>4) Packing list (1 original copy)</li> <li>5) Certificate of origin</li> <li>6) Certificate of insurance</li> </ol> <p>3.4.8 Pay the fine and penalty as set in Articles 6.2 and 6.3 of the Contract in cases specified in this Contract.</p>
--	--

**4. ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1. Սույն Պայմանագրով ՎԱՃԱՌՈՂԻ կողմից մատակարարման ենթակա Արտադրանքի ընդհանուր գինը կազմում է 3.696.840 եվրո, որից 3.080.700 եվրոն ԳՆՈՐԴԸ պետք է վճարի ՎԱՃԱՌՈՂԻՆ, և 616.140 եվրոյին համարժեք դրամը պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: ԱԱՀ-ն պետք է վճարվի Արտադրանքի Հայաստանի Հանրապետություն ներմուծման ժամանակ:

Արտադրանքի մատակարարման գինը 0,06 եվրո յուրաքանչյուր դեղահատի համար կայուն է և ՎԱՃԱՌՈՂՆ իրավունք չունի Պայմանագրի ընթացքում պահանջել ավելացնելու, իսկ ԳՆՈՐԴԸ նվազեցնելու այդ գինը, բացառությամբ 3.1.6 կետով նախատեսված դեպքի: Արտադրանքի գինը ներառում է Արտադրանքի մատակարարումը CIP - Երևան պահեստ (Incoterms-2010) պայմաններին համապատասխան, որը ներառում է փաթեթավորման, պիտակավորման, փոխադրման և ապահովագրության ծախսերը: Արտադրանքի գինը Եվրոյով չի կարող փոփոխվել հայկական դրամի և Եվրոյի փոխարժեքի փոփոխությունից:

4.2. ԳՆՈՐԴԸ մատակարարված Արտադրանքի դիմաց վճարում է բանկային փոխանցման միջոցով՝ ՎԱՃԱՌՈՂԻ բանկային հաշվին փոխանցելու միջոցով՝ ընդունման-հանձման արձանագրության և ՎԱՃԱՌՈՂԻ կողմից տրված հաշիվ-ապրանքագրի հիման վրա:

4.3 ՎԱՃԱՌՈՂԸ պարտավոր է վաճառել Արտադրանքը ԳՆՈՐԴԻՆ սույն պայմանագրով սահմանված գներով:


**4. THE PRICE OF PRODUCT AND ORDER OF PAYMENT**

4.1. The total price of the Products to be delivered by the SELLER in accordance with the Contract is 3 696 840 Euros, from which 3 080 700 Euros paid to the SELLER and 616 140 Euro equivalent dram is the VAT to be paid to Republic of Armenia State Budget by the BUYER. VAT shall be paid upon the importation of the Products to the Republic of Armenia.

The price of the Products to be delivered is fixed at the price of 0.06 Euro per tablet and the SELLER has no right to require any increase of the price and the BUYER has no right to require to reduce it for the duration of the Contract, except the cases stipulated by the point 3.1.6. The Price includes the delivery of the Products according to CIP - Yerevan warehouse terms (Incoterms-2010) including packaging, labeling, transportation and insurance costs. The Price in Euro cannot be affected by changes in exchange rates of AMD and Euro.

4.2 The BUYER pays for the Products delivered through a bank transfer to the bank account of the SELLER on the based on the Act of Acceptance and the invoice issued by the SELLER.

4.3 The SELLER shall sell the Products to the BUYER at the prices stipulated by the contract.



4.4 ԳՆՈՐԴԸ պարտավորվում է վճարումները կատարել հաշիվ-ապրանքագրի ստացումից երեսուն (30) օրվա ընթացքում վճարման ժամանակացույցի համապատասխան (Պայմանագրի Հավելված 3): Վճարումները պետք է իրականացվեն եվրոյով SWIFT համակարգով առանց որևէ պահումների ՎԱՃԱՌՈՂԻ բանկային նշված հաշվեհամարին՝ FR76 30003 01540 00020028808 64, բացված SOCIETE GENERALE ORLEANS (FRANCE), Գրուպ Դես Աժանս Դոլլեան, 14 Ավենյու դե Դոուա դես Հոմ, 45000 Օռլեան, Ֆրանսիա, CODE SWIFT: SOGE FRPP ORL.

4.5 ՎԱՃԱՌՈՂԻ բանկում փաստաթղթերի հաշվառման և ՎԱՃԱՌՈՂԻ երկրում դրամի փոխանցման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են ՎԱՃԱՌՈՂԻ կողմից, իսկ ԳՆՈՐԴԻ երկրում դրամի փոխանցման հետ կապված ծախսերը կատարվում են ԳՆՈՐԴԻ կողմից:

**5. ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ և ԵՐԱՇԽԻՔԸ**

5.1 ՎԱՃԱՌՈՂԸ երաշխավորում է, որ Արտադրանքը, որը առաքվում է ԳՆՈՐԴԻՆ, համապատասխանում է սույն պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին: ՎԱՃԱՌՈՂԸ երաշխավորում է, որ Արտադրանքը արտադրված է Պատշաճ արտադրական գործունեության (ՊԱԳ) պահանջներին համապատասխան և կարող է օգտագործվել ՎԱՃԱՌՈՂԻ կողմից ԳՆՈՐԴԻՆ տրամադրված որակի հավաստագրի մեջ նախատեսված պահպանության ժամկետի ընթացքում՝ պահեստավորման պատշաճ պայմանների դեպքում: ՎԱՃԱՌՈՂԸ երաշխավորում է, որ Արտադրանքի որակը համապատասխանում է Վերլուծության

4.4 The BUYER shall make the payment within thirty (30) days of the date of the invoice in compliance with the payment schedule (Annex 3 of the Contract). The Payments shall be made in Euro through SWIFT without any deduction whatsoever to the SELLER's bank account N°

FR76 30003 01540 00020028808 64

opened at SOCIETE GENERALE ORLEANS (FRANCE), Groupe des Agences d'Orléans, 14 Avenue des Droits de l'Homme, 45000 ORLEANS, France, CODE SWIFT: SOGE FRPP ORL.

4.5 All expenses related to the registration of the documents in the SELLER's bank and all expenses related to money transfer in the SELLER's country shall be borne by the SELLER, and in the BUYER's country shall be borne by the BUYER

**5. QUALITY OF THE PRODUCTS AND THE GUARANTEE**

5.1 The SELLER guarantees the compliance of the quality of the Products delivered to the BUYER with requirements of technical specification defined by Annex 1.

The SELLER guarantees the manufacturing of Products in accordance with requirements of Good Manufacturing Practice (GMP) and the fact that the Products can be used during the shelf-life stated in the quality certificate provided by the SELLER to the BUYER in case if proper storage. The SELLER guarantees that the quality of the Product complies with the corresponding Certificate of Analysis.

Հավաստագրին:

5.2 ԳՆՈՐԴԸ երաշխավորում և հայտարարում է, որ ունի սույն Պայմանագիրը կնքելու համար պահանջվող հնարավորությունները, ռեսուրսներն ու ենթահամակարգերը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 ՎԱՃԱՌՈՂԸ պատասխանատվություն է կրում հանձնված հավելված 1-ով սահմանված պահանջներին համապատասխանող Արտադրանքի որակի և Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետները խախտելու համար:



6.2 Արտադրանքի սույն Պայմանագրով սահմանված ժամկետներից ուշ մատակարարելու դեպքում, որը չի դիտվում որպես ոչ պատշաճ կատարված կամ չկատարված համաձայն 6.3 կետի, ՎԱՃԱՌՈՂԸ Արտադրանքի չմատակարարված մասի գնի նկատմամբ վճարում է տույժ՝ 0,05 տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ սկսած մատակարարման նախատեսված օրվանից մինչև այն օրը, երբ ՎԱՃԱՌՈՂԸ խախտում է մատակարարման պայմանները: Հասկացվում է, որ սույն հոդվածի դրույթները չեն տարածվում հոդված 2-ում թվարկված դեպքերի վրա, որոնք կարգավորվում են բացառապես հոդվածի 2-ի պայմաններով: Եթե ՎԱՃԱՌՈՂԸ չի խախտել մատակարարման պայմանները, և ԳՆՈՐԴԸ որոշում է դադարեցնել Պայմանագիրը 3.1.3.1 բ հոդվածի պայմանների համաձայն, ՎԱՃԱՌՈՂԸ պարտավոր է վճարել տույժ, մատակարարման նախատեսված օրվանից մինչև ՎԱՃԱՌՈՂԻ կողմից ԳՆՈՐԴԻՑ դադարեցման ծանուցումը ստանալը ընկած ժամանակահատվածի համար՝ ստացումը հավաստող հետադարձ ծանուցմամբ նամակի

5.2. The BUYER guarantees and declares that it has the capacity, resources and infrastructure required for conclusion of the Contract.

## 6. LIABILITY OF THE PARTIES

6.1. The SELLER is liable for the quality of the delivered Product in accordance with the terms of Appendix 1 and for breach of the terms of the delivery defined by the Contract.

6.2 In case of violating the delivery terms defined by the Contract, which are not defined as non-performance or improper performance according to Article 6.3, the SELLER pays fine in the size of 0.05 percent of the price corresponding to the non delivered Product calculated by calendar days, starting from the initial scheduled date of delivery until the date when the SELLER remedies to the breach in the delivery terms. It is understood that the present article shall not apply to cases listed in Article 2, which are governed by the terms of article 2 only. If the SELLER has not remedied to the breach of the delivery terms and the BUYER decides to terminate the Agreement according to the terms of Article 3.1.3.1 b) the SELLER shall pay a fine for the period running from the initial scheduled date of delivery to the date of receipt by the SELLER of the BUYER's termination notice in the form of a registered letter with acknowledgment of receipt.




ձևով:

6.3. ՎԱՃԱՌՈՂԻ կողմից սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով: Սույն կետի իմաստով ՎԱՃԱՌՈՂԻ կողմից պարտավորություններ չկատարել է համարվում Արտադրանքի մատակարարման ամբողջական բացակայությունը հավելված 5-ում նշված նախատեսված օրը և չի հատուցվում մատակարարման նախատեսված օրվանից 30 (երեսուն) օրվա ընթացքում, իսկ ոչ պատշաճ կատարումը՝ սույն պայմանագրի Հավելված 1-ին չհամապատասխանող Արտադրանք մատարարարելը, որը չի հատուցվում ԳՆՈՐԴԻ կողմից ՎԱՃԱՌՈՂԻՆ նման ոչ պատշաճ կատարման վերաբերյալ ծանուցման օրվանից 30 (երեսուն) օրվա ընթացքում: Կասկածներից խուսափելու համար, սույն հոդվածը չի տարածվում հոդված 2-ում թվարկված դեպքերի համար, որոնք կարգավորվում են բացառապես հոդված 2-ի պայմաններով: Ընդ որում, հոդված 6.2 և 6.3-ում թվարկված տույժերը չեն գումարվում:



6.4. Սույն Պայմանագրի հավելված 2-ով սահմանված վճարման պայմանները խախտելու և/կամ ոչ լրիվ վճարման դեպքում ԳՆՈՐԴԸ ՎԱՃԱՌՈՂԻՆ վճարում է տույժ՝ չվճարված արժեքի 0.05 տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ սկսած այն օրվանից, երբ վճարումը պետք է կատարվեր մինչև այն օրը, երբ գնորդը խախտել է վճարման պայմանները, առանց խախտելու որևէ հատուցման պարտականություն, որը կիրառելի օրենսդրության համաձայն ունի վաճառողը:

6.3 In the event of non-performance or improper performance of their obligations of the SELLER under this Contract a penalty equal to 0.5% of the total price of the Contract is charged. Under this provision the non-performance by the SELLER means the total absence of delivery of the Products on the scheduled date as detailed in Annex 5, not remedied within thirty (30) days as from such scheduled date of delivery, and improper performance means supply of the Product not corresponding to Annex 1 of this Contract, which is not remedied within thirty (30) days as from date when the BUYER gives notice to the SELLER of such improper performance. For the avoidance of doubt, the present article shall not apply to cases listed in article 2, which are governed by terms of Article 2 only. Moreover, penalties listed in Article 6.2 and 6.3 are not cumulative.

6.4 In case of breaching the payment terms or partial payment for the Product stated in Annex 2 of this Contract, the BUYER shall pay to the SELLER a fine in the amount of 0.05 percent from the unfulfilled price, calculated by calendar days, starting from the date when payment is due until the date when the BUYER remedies to the breach, without prejudice to any other remedy which the SELLER is entitled to by law.



<p>6.5 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:</p> <p>6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:</p> <p>6.7 6.2 և 6.4 կետերում թվարկված տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները ամբողջությամբ կատարելուց:</p>	<p>6.5 The fine and penalty provided in the Articles 6.2 and 6.3 of this Contract are calculated and compensated from amounts payable to the SELLER by the BUYER</p> <p>6.6. In cases not stated in this Contract the Parties are liable for non-performance or improper performance of their obligations in accordance with the legislation of the RA.</p> <p>6.7 The payment of the penalties listed in Articles 6.2 and 6.4 does not release the Parties from full performance of their contractual obligations.</p>
